ծերուն՝ անտառաց Փիլոմելին նման մեղրածորան հագագները։

Պատարագէն վերջ խաչալուայ հանդէսը պիտի կատարուէր. ծանրագին չուրջառ մի տուին ծերուն կռնակը, որ շատ տարի ժողովրդապետի պաշտօն վարել էր եկեղեցւոյն, և ինքն իբրև նոր ոմն Իսահակ լուսաւորեալ աչօք, պիտի կատարէր այդ օրհնութեան հանդէսը՝ առանց տեսնելու. ինձ կարի ցանկալի էր ներկայ գտնուիլ այդ արարողութեան ևս, այլ ժամը տասը անցել էր, օրով առաջ հրաւիրուած էի Ռոստովի կաթոլիկաց եկեղեցին ժամարար լինելու նոյն օրը. փոքրիկ կառք մի վարձելով փութացի 'ի Ռոստով, ուր խուռն բազմութիւն ժողոված եկեղեցւոյն չորս կողմը կը սպասէին, 'ի թիւս որոց և բազմաթիւ ազգայինք։ Մինչև երեկոյ 'ի Ռոստով մնացի և նոյն օր կէս օրուան ճաշը ունեցայ պատիւ վայելելու Պ. Յովհաննէս Տէր-Աբրահամեանի տան մէջ, որ ինչպէս կանխաւ զուրցեցի, Ռոստովի մէջ մեծ հայկական տպարան ունի, և ի վաղուց ինձ բարեկամ է։ Երեկոյին դառնալով ի Նախիջևան պատրաստուեցայ վաղուան ճանապարհին, փոքր ուղեւոր պարկիս մէջ ամփոփելով աստի և անտի ընդօրինակած յիշատակարանքս։ Եւ որովհետև արդէն հրաւիրուած էինք նոյն երեկոյին Եղիա Աղա Պալապանեանի տուն բաժակ մի չայի (ըստ ռուսաց բացատրութեան), արգոյ Եպիփանու հետ գնացինք վերջին երեկոյն անցընելու մեր հին բարեկամին քով։ Եղիա Աղա դարուս հետ 'ի միասին կը քայլէ, այլ դեռ ժիր, առողջ է մտօք և մարմնով. նա Անեցի գաղթականացմէ չէ, այլ յետոյ ի Պարսկահայոց Նախիջևան եկած. ինչպէս ինքն՝ նոյնպէս և հօրամոյն զաւա-